

և վայելչութեան նորա կարող են պատ-
րուակել իւրեանց հակամեաութիւնը դէպ
ի զեղխութիւն և զքօսանք: Չէնք իւր-
եանց խոնարհական խօսակցութեամբ,
քաղցր և սրտառուչ անկեղծութեամբ,
կղիմակաւ որեն քինախնդիր բնաւորու-
թեան արտաքին սառնութիւնը *), նորա
իւրեանց զգացմանց մէջ կ'յայտեն սակաւ
վսեմութիւն և փափկութիւն: Թէպէտ
մի կողմից ունին յարգանք դէպ ի ննջե-
ցեալք, սակայն միւս կողմէն չունին մեծ
մարդասիրութիւն առ կենդանիս: Մի ի-
րողութիւն, որով նորա միանգամայն կը-
հեռանան արատաւորութեան անունէ՝
է արեւցութիւնն:

Այսպիսի վարէ լիակատար իրաւամբ: Առ-
նա ունեցած մեծարանքն կ'հասանէ մինչ
ի ծայր երկրպագութեան, նորան անհր-
նազանդ գտնուիլը է աննկերելի յանցանք,
նա սակաւ կցուցանէ զինքն ժողովրդոց,
բայց տշտակի հանգամանաց մէջ՝ նա կը բը-
ջապատուի ամենաերեւելի շքեղութեամբ,
մարդիկ իւրեանց երեսներու վերայ դէպ ի
գետին կ'թաւալին նորա անցանելու միջո-
ցին: Աս կ'կոչուի որդի երկնից և միակ
կառավար աշխարհի:

(*) Ցաւօք սրտի հարկ է նկատել՝ որ սոյն իսկ
բնաւորութեամբ շատեր կան ոչ միայն Չինաց մէջ՝
այլ և մեր մէջ անգամ, ուրեմն թող սոյնպիսի
անհասանք, կամ լաւ ևս ասել՝ մահառիթ ցեցեր
մարդկութեան՝ բարեհաճին միանգամայն ի բաց
իղելոյ իւրեանց երեսն կեղծուպատիր, ցուցամոլ,
խմստակ և փրեալ սոփիստականութեան դատա-
պարտելի դիմակը, դէթ անմեղ հոգիք դէպ ի կու-
րուստ չվարելոյ համար, ընթանալով մարդկու-
թեան ճանապարհով:

Ծան. Թարգ.

Բնեայն ինչ ի Չինաստան անխափո-
խելի օրինաց կենթարկուի, մինչև անգամ
երկու հաւասար անձանց մէջ եղած սո-
վորութիւնքն որոշեալ է օրինօք: Նորա
բոլոր կէտերը կարի իմն ձշղու թեամբ կը-
պահպանուին: Հասարակաց միմեանց ող-
ջոյն տալն անգամ ունի իւր սահմանաւ
ձեւերը հաստատուած սովորութեանց ա-
տեանով, սոյն ձեւերից որ և իցէ, մինն մո-
ռացման և զանցառութեան տալն ո՛ր և ի-
ցէ մասնաւոր անձի կողմանէ՝ կ'հետեւեցնէ
գանահարութիւն (bastonnade). եթէ նոյն
յանցաւորն է որ և իցէ պաշտօնատար ան-
ձրն՝ այն ժամանակ նա կ'ձգուի իւր աստի-
ճանէն, կամ կարգիլուի իւր պաշտօնէն:

(Թարգ. ի Ղազարեանէ)

ՁԱՀԱՄ ձԱՂԱՌԵԻ

ՏԷԷԷ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՍԵԲԵՐԱԿՈՒԹԵՒՆ ՄԱՆԿԱՆՑ ՀԱՅՈՑ.

(Անշուք Բէն-Էն Ֆարսի)

Մեր ազգն արդեօք ի՞նչ դիտաւ որու-
թիւն ունի: Կամենում է արդեօք իւր
մատաղաւորց զաւակաց դաստիարակու-
թիւն, և ի՞նչպէս է ցանկանում կրթել:
Մերազնեայ՝ ազգի համար ձրի ծառայող-
քն, անխոնջ և անխորձ մշակքն, զճան-
րութիւն աւուրն քրանաջան աշխատա-
սիրութեամբ բարձող բռնակիրքն, մե-
ղուաց նման Գերմանիայի լայն մշակեալ
անտապաններէն, Ֆրանսիայի զաւարա-
ղուարժ գաշտերէն, Բելգիայի ծաղկալիւր

հովիտներէն, Բեղմզոյի յոռի մի պարտիզներէն, Օււիցցերիայի երկնագարդ բուրասանէն, և Ամերիկայի կենդանոտող դրախտէն, (ուր վարժարանական աթոռոց մեծագոյն մասն կայ ձեռք տրկնանց և օրինորդաց.) անուշահոտ և բարեհամ ծաղկանց հիւթերն ծծելով, անձանձիր երկասիրում են ազգային բջիջներէ մէջ մեղր պատրաստել, և փիթակներն հարստացուցանել: Բայց այն մեղրն՝ որ ամենցու քմաց համար թէպէտ քաղցր է, սակայն միայն առողջ ստամոքս ունողներին մարսելի, իսկ ախտացելոց՝ բնդ հակառակն: Չկարծեմ՝ թէ մի և նոյն դաստիարակութեան կանոնն պիտոյանայ միօրինակ՝ թէ Պօլսիցի Հայ մանկանց, թէ Պայազի ծնունդ տղայոց, որոց առաջինքն աչք են բացել քաղաքականութեան ծաղկեալ կեդրոնումն, և միւսներն առաջին ոտնիօխն սկսել են Վիւրտեմբերգի վայրագ բնաւորութեան տակ:

Որքան զանազանութիւն կայ Տփլիսացի և Վազախ-Ռորչալուի Հայրի մէջ, այնքան տարբոր զաստիարակութեան ձև հարկաւոր է երկոցունց զաւակաց՝ որ արդիւնաւոր լինի: Աթէ մէկ արեգակն տկար է ամենուրեք միօրինակ ներգործել, ինչպէս պիտի յաջողէ մէկ դաստիարակութեան ձևն ամեն տեղ միակերպ թագաւորել: Այնատարած է Ռուսաստան և վարժարանաց կարգն և կանոններն են մի, այլ դաստիարակութեան պայմաններն դեռ չեն մտն այն թէութեանց ներքոյ, եթէ ուրեք մանկավարժարանք սկզբնական դաստիարակութեան երեւել են յաջողակ, բազում ուրեք առանձին կրթութեան օգուտներն հանդիսացել են

աւելի շոշափելի: Իսկ այն երկիրներն՝ ուր մեր ազգն է ցրուած, բազմապատիկ լայն են և ընդարձակ քան Վուսաստան, ինչպէն է կարելի ամենին մէկ կարգ և մէկ կանոն տալ: Ենդրիս՝ որ թագաւորում է Բրիտանիան երկրաց վերայ և Հնդկաստանի գաւառաց և Եւստրալիայի և Ովկիանիայի կղզեաց, միթէ ամենեցուն մէկ դաստիարակութեան եղանակաւ է կրթութում: Այս նոցա կրթութեան և դաստիարակութեան վերայ այնպէս է տքնում, ինչպէս գորովալի մայրն՝ իւր զաւակաց սննդեան և զորոգացման վերայ, բայց ի զործ եղեալ ամենայն ձևերն ևս են մայրական խնամով անօրինեալ, որ ոչ երբեք նորածին տղային չարալի ոսկոր՝ կրծելու, և ոչ պատանեկին՝ կաթն ստանց: Սուրբ Իջմիածինն է մեր հոգեւոր մայրն, և նորա անարատ ստեանց կաթն է մեր անուցանողը և զարդացնողն, և նորամէն միայն և միշտ պիտի արտաքս բղթէ մեր հոգեւոր կերակուրն. նա է մեր միակ արեգակն՝ որ ամենայն տեղ՝ ուր ուրեք ցրուած ենք, ուր ուրեք պանդխտացած ենք, ուր ուրեք աննիւթ կապերով կաշկանդուած ենք, նա իւր զուարթարար լոյսն, և կենսառիթ ջերմութիւնն հասուցանելով մեզ, պահում է և պահպանում է մեր զբոլակալ ազգութիւնն. նա պիտի իւր մայրական գորովով մեզ թէ կաթն ջամբէ, թէ հաստատուն կերակրով յազկեցունէ ըստ իւրաքանչիւր պիտոյից. նա պիտի իւր ծնողական զթութեամբ չնրէ որ միամեայ տղայոց և քսանամեայ պատանեկաց միօրինակ խառնիխուռն կերակրովք խճողեն որովայնն, ծանրացուցանեն ստամոքսն. վազ ենք տակ՝ թէ դեռ մեր

ազգի դարունն է. մեր ազգն դեռ աղայա-
կան փոց մէջն է, անյարմար է ոսկր
տալ անձոր մանկանց ձեռքն անձաքելի
դեռարոյս ասամանց նոցա, որպէս և ան-
յարմար պիտի լինէր, եթէ տային կաթն
զարգացեալ պատանեկաց, որոց հարկա-
ւոր է դառանց պարարտ միս, և զուար-
կաց ամուծ: Այն մեր հասարակաց մայրն՝
չպիտի ներէ՝ որ վարձկան դայիակէք օտար
կաթն ջամբեն և անբարոյական սանտուաց
խանդարեալ կաթին հետ թոյն արբուցա-
նեն, և զմեզ՝ մեր մատաղ՝ անմեզ հա-
սակի մէջ՝ բարոյապէս մահացնեն: Այս
նորա մայրական անտեսութեան սեպուհ
պարտքն է:

Սուրբ Աջմիածինն ունի և անժխտելի
իրաւունք և անհերքելի ձեռնհասութիւն
խելամուտ անել ազգին՝ թէ ի՞նչ դա-
նազանութիւն կայ ի մէջ սննդեան, դաս-
տիարակութեան, և կրթութեան, և թէ
որո՞ց պարտաւորութիւնն է անուցանելն,
որո՞ց՝ դաստիարակելն, և որո՞ց՝ կրթելն, և
որովհետեւ դաստիարակութեան լուծն իւր
հոգեպարզ և մայրական խելամուտութեան է
տեսանազրել, ունի զօրութիւն ասանձին
ասանձին դաստիարակութեան ձեռք տալ
Արեանցեոց հայածնունդ զատկաց, և
Շամախեցեոց կամ Շուշեցեոց մերազ-
նեայ մանկանց համար պարտաճ պիտոյից
նոցա՝ ըստ տեղեաց և ըստ բնաւորու-
թեանց. բոց այս քան զՓարաւոնեան ա-
ղիւստրութեան լուծն առաւել դժուար-
ակիր կլինէր, քան որոյ և բարւոքն աւել-
ի այն է, որ նա միշտ շարժի որպէս միակ
դաստիարակապետ բովանդակ ազգի, և
անդադար խրախուսէ և զրգէ զանդաստի-
արակ ազգն ի դաստիարակութիւն, ա-

ռանց այս կամ այն ձեռն նմա անաջարկե-
լոյ, սղ այս ձեռն ապաստան անէ, որ
ճունելութեան այն հատընտիր և փորձ
դաստիարակաց, որք վիճակեալ են ըստ
իւրաքանչիւր քաղաքաց և զիւրօրէից,
ստէպ յուշ ածէ նոցա՝ որ նոցա դաստիար-
ակութեան յանձնեալ մանկունք՝ են
ազգի ակնկալութիւնքն, են ազգի հան-
դերձեալ սերունդն. այն մանկունք՝ որ
այսօր վէճ են խաղում, կամ եղեգան վե-
րոյ հեծած վազվզում, կամ ոտբոխիւզ
պատեցնում, երբ նոցա դաստիարակու-
թեան տակէն երանեն և մոռնեն հայրե-
նեաց կրթարան, պիտի լինին յետ քանի
ամաց անդամք հասարակութեան, պիտի
դառնան քաղաքացիք, պիտի իւրեանց
ձեռին ունենան ազգի բարոյ և չարի
քուէքն. կարծն ասեմ, փոխանակ արդի
հօրց՝ պիտի լինին նոցա որդիքն, որ այն
դաստիարակք միմեանց հետ անխորդախ
խորհրդածութեամբ մշակին դաստիարա-
կութեան ձեռն, և իւրեանց հնորեալ
կանոններն, որ կարող լինին ըստ պա-
հանջման հանդամանաց կրթութիւն տա-
լով ազգի մանկայն՝ տարբացնել նոցա
մէջ ապագայ կրթութեան ընդունակու-
թիւնն, միութեան և միաբանութեան սե-
րըն, և հայրենասիրութեան սերմերն:

Սուրբ Աջմիածինն պիտի որպէս դէս
կարդեալ ի վերուստ անքուն ակամբ հակէ՝
որ հին և նոր աշխարհաց այգեաց և այ-
գիտանեաց ծաղիկանց մէջն՝ մեր անխոնջ
և անձանձիր մեղուաց ծածած հիւթը չու-
նենայ իւր մէջն ծածկած տեղակոն մոլո-
րութեանց թոյնն, որ պատրուակաւ պան-
ծալի ազատամտութեան բազում անգամ
և անպիտանեցութեամբ մեղուաց խախտ

դում է ընդհանրի մէջ և մահաւորութիւն խոթութեամբ թիւններ է պատճառում: Այսպիսի ժամանակներն Վիտգինեսի ցուպն վերամբառնայ և այն պարզամիտ դատարարակն հարցանէ՝ թէ ընդէ՞ր ոչ բարեոք դատարարակեա: Այս դաւաղանշարժն՝ Սուրբ Աթոռն՝ որպէս երեւել տեղի հոգեպարար հանգստեան վարդապետութեան սրբոյն Վիգորի Բ. Լուսաւորչի, ձգարիտ յաջորդի և ժառանգորդի առաքելական դաւաղանի սրբոց թաղէոսի և Բարդուղիմէոսի, և նոցա փոխանորդ Աբրահամն Հայրապետի, ունի յատուածաւանդ իշխանութիւն և տիրապահանջ պարտաւորութիւն ստէպ երեւցուցանել հաւատապատում կրօնադիտութեան դատարարութեան մէջ, և եկեղեցական պատմութեամբ հրահանգելոյ ժամանակն, որ մանուկն անդստին ի մանկութենէ ծանալէ իւր ազգն, թէ ի՞նչ է Հայն, և ի՞նչ է Հայութիւնն, և ի՞նչ է հոյրենիքն, և թէ ի՞նչ ի՞նչ է նորամէն պահանջում դիտենալ և պահել և կատարել Հայաստանեայց եկեղեցին, և նա ո՞ր ճանապարհաւ պիտի ընթանայ, և ո՞ր լայնարձակ արահետներէն պիտի զգուշութեամբ խտորի այս կենցաղական շրջմոյկի շաղպայ և բաւական մէջէն անցնելոյ ժամանակն, որ անմոլար հասանէ զհեռաքաջ և արթուն հոգեւոյ Հայաստանեայց եկեղեցւոյ և առանց մատնելոյ ի ժանկա դայլոց՝ ազատի և ընկնի ի փարախն Վրիստոսի:

Արքան մեծ է և բարձր այս հոգեւոր իշխանութիւն Աբրահամ Վահին, այնքան ծանր է և այս լուծն՝ որ նորա վերայ կայ դրած, այն լուծն՝ որ ամենայն խաչաքարձից համար թիւթ և փոքրոգի է յօրի-

նած, միայն նորա թիւթանց վերայ է ծանրակշիւ և ամենածանր, որովհետեւ միայն ի նմանէ կ'պահանջուի այսքան միջոնաւոր համազգեաց, որպէս նորա՝ անարատ Հարսին Միածնի՝ սուրբ արդանտի հարողաածնեոց փրկութիւնն: Այնպէս մարգոյն, որ կուրանայ այդ իշխանութիւնն, որ խաչի նման կայ եղեալ ի վերայ ունոց նորա. վայ արհամարհողաց՝ որ ի ներքուստ հովանոյ դաւաղանի նորա փախչելով՝ կրկարծեն թէ պիտի ապառին ի պատասխանոյ. վայ կամաւ կուրացելոց, որ սիրելով զխաւարն՝ ծակամուտ կլինին ի ծմակոյ, և լին շտապեր դալ առ լոյսն: Բայց ինչպէս կուրութիւն աչաց չէ կարող արգելուլ զայս արեգական, այսպէս և խլութիւն ականջաց՝ չունի ոյժ համբալոցանելոյ զըզուս և լռեցուցանելոյ զձայնս: Արք շուցեալ են աջօք, նոցա համար է միայն անլոյս ճառագայթն արեւու, և որք խրացեալ են ականջօք՝ օձինման իւրեանց առամբ ունկններն խցանելով, նոցա համար է ձայնն անլսելի: Բայց ի՞նչպէս են կարող համբալոցանել զայն բերան, որոյ բարբառն անլսելի՝ որպէս ձայն որոտմանց հնչում է յերկնից և ի հաստատութենէ, բարբառ՝ որոյ արձագանքն լսիլ են լինում յամենայն ծագս աշխարհի:

Հեռեորդ յօդուածի մէջ կնուիրեմ իմ համազգեաց համառօտ փորձիմոյ տեսութեան, ա. թէ Հայազգի մանուկն իւր հաւատապատում կրօնադիտութեան և եկեղեցական պատմութեան մէջ ի՞նչ ճանապարհաւ պիտի սակաւ առ սակաւ յառաջ երթայ, և համոզվի իւր պաշտած կրօնի ուղղափառութեան մէջ՝ առանց մոլեռանդութեան. Բ. դատարարակն ի՞նչ-

պէս պիտի նորա մտաց աչքն բանայ, որ
նա տեսանէ պարզ և իմանայ առանց կրօ-
նամոլութեան թէ ո՞ր եկեղեցւոյ ծնունդ
է, և այն իւր ծնող եկեղեցին՝ ո՞ր կէտե-
րով է զանազանուած այլոցմէն, և ի՞նչ
պատճառաւ է մտել այն տարբերութիւն-
ներն, և նորա ծնող եկեղեցին ի՞նչպէս է
խկզբանէ ծագել, և մինչև այսօր յարա-
տեւել, որ այն մանուկն առ իւր մայրն չմը-
նայ ցուրտ և անտարբեր իւր զարգացած
ժամանակին, և խելամուտ լինի Գ. թէ
Հայրապետութիւնն ի՞նչ է, և ազգի հա-
մար ի՞նչ նշանակութիւն ունի: Այս երեք
խնդրոց վերայ պիտի հիմնեալ լինի սորա
հետեւեալ շարունակութիւնն, փոխուստ
տալով ի տարապարտ կրկնութենէ՝ ա-
ռանց որոշ գլխովք նշանակելոյ:

ԵԵՐՈՒՆԻ ԳԱՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՐԿԱԾՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ.

(Ի Ժ. Լեւոն Տաղորդ)

ԵՐԷ ԶԵՐԵՐԵՐ.

Այլ վատարանցն վերջապետեց
Յազգին սիրոյ դառն յիշատակ,
Եւ վատ գործոց նոցին համար
Եզերերգին Քերթողք ի նուագ:
Զխորդ անկաւ աշխարհսփող
Մեր Հայրենիքն իսպառ անլուր,
Գահ տէրութիւն իշխան զօրու
Հինից արոյ բերանակուլ:
Զի՞ անխնայ Աւագանին
Պաք նախարարք համայն որեար,
Անխղճասիրտ զժտեալ դահին,
Այս ամենայն չարեաց պատճառ:

Զի երբ իշխան անգէն զօրուն
Իշխանացաւ կալաւ զգահ,
Անդ բեկար էր պետ դասուն
Ծնող չարեացս ի մարդամահ:
Գժոխածին ծնունդք չարին
Իւր չար կամեցն են արբանեակ,
Որք դիակնցն յարիւն բոսոր,
ԶՀայաստան լուացին համակ:
Զօրաղխաց զօրք անհլու
Ինքնաղլուխ սուր ի ձեռին,
Ծառայք փեղկեալ զքող յերեսաց
Տեարց խստասիրտ կեանս բարձին:
Այսպէս յիրկծուէն փառակեցին
ԶԱյրարատեան զպետութիւն,
Հազարացին գայլ ծարաւի
Իբրու ի գէշ սրացաւ ի նոյն:
Ի մարդախուռն արեան մարտի
Արդոյց զնիզակ սուր երկապրին,
Որ ի ընթել զՀայաստան
Հերիք չարար գերել զմարմին:
Գաղթեաց արլ այր յիւր ակաստան
Զգուշացեալ գոհար անձին,
Գահակարեաց հրէշ վիթխար
Տանն անտերունջ Երամադնին:
Թաւաղղոր անկան մարդիկ
Յարեան առուս բոսորաներկ,
Իբրու ոչխար ի սպանդանոց
Հեղան արիւնքն հրաշնկ:
Հրաշունչ փշեաց ժամաւ հոգմ,
Երաշտահալ եկն խորշակ,
Բուք մորիկ օդոց խառնուածք
Գերեաց եակն գարն երինորակ:
Զմեռն մահաւ թաղաւորեաց,
Սառնամանիք բացան յերկնից,
Երկիր շեռեալ զգարուն ծիծաղ
Ի սուղ որդւոցն լացակից:
Իբրեւ պրիւ կակամարարձ
Սրտախղճուկ յարեան ճապար,
Անմխիթար լայր դիակունս
Զանկեալս տաղաստ անխոշեթաղ:
Աւագութիւլ նշխարեցան
Բմուր ամրոյք աշտարակեալ,
Իբրու վրացն սարդխոտայն: